տածաւալ պարգեւատուէ եւ մ(ա)ղագ-
սիրէ ամէն։»

«Զոր ա(ւր)հնութի(ւն) ա(ստուա)-
ծային եւ աղօթք ս(ուր)բ լուսաւորչին,
եւ ս(ուր)բ կարապետին եւ սրբոյն Ստե-
փաննոսի Նախավկային, եւ ամ(ենայն)
սրբոց երկնաւորաց եւ երկրաւորաց ե-
կեսցէ եւ հանդիցէ ի վ(ե)ր(այ) ձեր,
մինչեւ ի սահմանե(ա)լ կէտ կոչմանն
Ք(րիստոս)ի։ Ամէն։»

«Եւ ընդ ա(ւր)հ(ն)ութե(ան)ս մե-
ղադրանօք ծանիք սիրելի որդիք, զի քա-
նիցս անդամ թուղթ գրեցի այդ ա(ւր)հ-
(նեա)լ քաղաքդ, վ(ա)ս(ն) չընդունելոյ
այդ պիղծ եւ դարշելի որովայնամոլ եւ
բատնաւս ճաղատ (չնչուած բառ մը),
որ ուր եւ գնացե(ա)լ է խլուրդ մկան
նման դարշահոտութ(եամ)ը լցեալ է, եւ
ի յամ(ենայն) տեղեաց հալածական եղ-
եալ. թէ ֆռանգ է գնայ ի մէջ ֆռանկաց
կենայ, ապա թէ լրբի եւ անզգամաբար
չրջի ի մէջ Հայոց, չունի հրաման մտա-
նելոյ ի մէջ հայոց եւ կ(ա)մ խօսելոյ
ընդ ումեք զի որոշե(ա)լ է ի հօտէ
ս(ուր)բ լուսաւորչին, եւ եթէ հայազուն
եւ լուսաւորչայ դաւանօք, ընդ դմայ
խօսեսցի եւ կարգաւոր ընդունի, եւ
ա(ւր)հնեա ա(է)ր ասասցէ եւ ողջոյն
տացէ, կ(ա)մ տղայ տացէ դ(ո)ր(ա)
ուսումն, անիծից եւ բանադրանաց նորա
կցորդ լիցին, ապա լուայ ի բ(ա)զմ(ա)ց
եւ հաւատարիմ մ(ա)ղկանց, թէ դուք
էք այդ անիծելոյդ ասպանջական եւ խը-
նամարկու, յուսով եւ խօսիւք ձերովք
այդը որջացեալ է, եւ դայթակղութիւն
բազմաց էղնում եւ խռովարար աշխ(ա)ր-
հի եւ պ(ա)տճ(ա)ռ արարե(ա)լ չար-
ե(ա)ց դ(ո)ր(ա) առ ձեզ վերաբերի։
Ահա առ(ա)ջագոյն սիրով եւ մեղադրա-
նօք պատուիրելով պատուիրեմ ձեզ, ե-
թէ ատելով ատէք զդա իբրեւ ս(ա)տ(ա)-
ն(ա)յ եւ հալածական առնէք ի ա(ւր)հ-
(նեա)լ քաղաքէդ, ա(ւր)հ(նեա)լ լինիք
յա(ստուծո(յ ամէնայնիւք։ Ապա թէ ո՛չ
լսէք մեզ ականջօք առնէք, ո(ր)պ(էս)
երեկն եւ եռանդն այնպէս գնայք այլեւ-
այլ պ(ա)տճ(ա)ռս դնելով, յետոյ սաս-
տիկ դառնագոյն կսկիծ կրելոց էք յի-
նէն, որոյ մրուրն ոչ սպառի յաւիտեան,
զի թէ այլք ընդունին դուք պարտիք
յամ(ենայն)ի հակառակել եւ հալածել
այդ նզովե(ա)լ խռովարարդ, փոխանակ
այսպէս առնելոյն վ(ա)ս(ն) սիրոյն զոր
ունիմ առ ձեզ հակառակն առնէք եւ սէրն
դառնութի(ւն) փոխարկէք։ Ահա սիրով
ասացի ձեզ, արիւն ձեր ի գլուխ ձեր։
Կատարողք հրամանաց մերոց ա(ւր)հնին
յա(ստուծո)յ, եւ ամ(ենայն) սրբոց, եւ
ի մէնջ, ամէն։»

«Գրեցաւ թուին ՌՃԻԹ (1680),
մարտի ամսոյ ԻԴ (24), ի Ստամպօլ
քաղաքի։»

(Հաւատոյ Տարածման ժողովոյն
դիւան Congr. Armeno V. III էջ 240 Ա.)

Հոս այլեւս բացարձակապէս կ'երե-
ւայ Ցակոբ Զուղայեցիի չեշտուած, եթէ
ոչ ծայրահեղ ատելութիւնը հաւատա-
դարձ հայ հոմէադաւաններու հանդէպ,
որոնք կը նկատէ «որոշեալ ի հօտէ Սուրբ
Լուսաւորչին, եւ հայազուն եւ լուսաւոր-
չադաւան» ներէ։

Սակայն յանուն անաչառութեան ես
հարկ կը սեպեմ հոս հրատարակել նաեւ
ամբաստանեալ Բարսեղ վարդապետի
նամակը ուղղեալ Հաւատոյ Տարածման
ժողովին, առնելով նոյն այդ ժողովին
դիւանէն։

«Բարձրագունեղք եւ պատուականա-
գունեղք եւ մեծարգոյք։»

«Գիտեմ, ստուգապէս, զի մեծագոյն
հոգս ունիք յաղագս փրկութե(ան) հո-
գոց, եւ մանաւանդ փափաքիք յամ(ե-
նայն) սրտէ առ ի ներ ածել զհերձուա-
ծողս, եւ մոլորեալս ի ս(ուր)բ կաթո-
ղիկէ Հռոմայ եկեղեցին։ Կարծեմ թէ
կարի հաճոյ են ձերում սրբութե(ան)դ,
զի ազգ առնիցեմք զայնցանէ, որք ձե-
րով իշխանութ(եամ)ը ի կողմանս ան-
հաւատից աշխատին սակս նոյն ներա-
ծութեան։ Ես որ ժամանակ ինչ ի դըպ-
բատանն տէ պրոպականտա ֆիտէի ու-
սայ, եւ ետոյ ի հայրենի գաւառն իմ
եկի զի ի մէջ ազգին իմոյ զճշմարտու-
թիւնն զոր առի սերմանիցեմ, ցանկամ,
բարձրութեն ձերում աստ առնել, եւ
ճշմարտապէս հրմուտս դրծել յաղագս
մանաւորաց իրաց, որք պատահեցան
ինձ ի քարոզելն զճշմարիտ հաւատն կա-
թուղիկէ եկեղեցոյդ։ Այլ քան զի ձեր
բարձրութիւնն առաւել հաւատայ առա-